

Ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է՝
ելնելով հետևյալ բանաձևից՝

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+APY)^{\frac{Dn}{365}}}$$

որտեղ՝

- **A** - ավանդի սկզբնական գումարն է:
- **n** - ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարն է:
- **N** - ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարն է (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետը համարվում է ավարտված:
- **K_n** - ավանդի ներդրման պահին և/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի և/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում պարտադիր վճարների հոսքեր:
- **D_n** - այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական՝ n-րդ դրամական հոսքերը ներառյալ: Այն դեպքում, երբ ավանդի ներդրման պահին է դրամական հոսքերը, $D_n = 0$:

Տոկոսագումարների կապիտալացման դեպքում տարեկան տոկոսային եկամտաբերությունն հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$APY=(1+r/n)^n-1,$$

որտեղ`

APY - տարեկան տոկոսային եկամտաբերությունն է:

r - տարեկան անվանական տոկոսադրույքն է:

n - մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է:

Ավանդի տոկոսի հաշվարկման օրինակ`

Հաճախորդը ցանկանում է ներդնել Կայուն ավանդ ՀՀ դրամով 365 օր ժամկետով` տոկոսների վճարման պարբերականությունը ընտրելով ժամկետի վերջում:

- Ավանդի գումար` 4,000,000 ՀՀ դրամ
- Ավանդի ներդրման ամսաթիվ` 02/06/2026
- Ավանդի մարման ամսաթիվ` 02/06/2027
- Տարեկան տոկոսադրույք` 10%
- Տոկոսների վճարման ամսաթիվ` 02/06/2027
- Վճարվելիք տոկոսագումար = $4,000,000 * 10/100/365=400,000$ ՀՀ դրամ
- Վճարվելիք զուտ տոկոսագումար (նվազեցվում է 10% եկամտահարկի չափով)= $400,000 - 400,000 * 10/100=360,000$ ՀՀ դրամ